# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
# ՄԱՐԶՊԵՏ

<< 16 >> << հունիսի >> 2015 թ N 75
ք. Եղեգնաձոր

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ԹԻՎ 20 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի <<բ>> ենթակետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2015 թվականի հունիսի 16-ի թիվ 57 որոշմամբ հաստատված կանոնադրության 10 և 11- րդ կետերը

## ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանում ստեղծել 11 անդամից կազմված գենդերային հարցերով զբաղվող մշտական գործող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Մշտական գործող հանձնաժողովի աշխատանքների համակարգումը հանձնարարել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի տեղակալ Մելսիկ Հարությունյանին:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2011 թվականի հունիսի 7-ի <<Մարզպետարանում գենդերային հարցերով զբաղվող մշտական գործող մարմին ստեղծելու մասին>> թիվ 20 կարգադրությունը:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2015 թվականի
Հունիսի 16 - ի N 15 կարգադրության

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝

1. Մելսիկ Հարությունյան - ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ

Հանձնաժողովի անդամներ՝

2. Արամ Գրիգորյան - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ

3. Վարդան Նահապետյան - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի առաջատար մասնագետ

4. Փառանձեմ Ղազարյան - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի պետ

5. Սոնա Մարգարյան – ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

6. Նորայր Սիմոնյան - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

7. Կարինե Մովսիսյան - <<Երիտասարդ սերունդ >> հասարակական կազմակերպության նախագահ

8. Վարդան Ավագյան - Եղեգնաձորի քաղաքապետի տեղակալ

9. Նունե Ավագյան– Գոմքի համայնքի ավագանու անդամ

10. Սվետլանա Դովլաթյան - <<Վարդաձոր>> թերթի խմբագիր

Հանձնաժողովի քարտուղար՝

11. Սուսաննա Հախնազարյան - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Կ.ՍԱՀԱԿՅԱՆ